ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

(1919 թ. օգոստոս—1921 թ. հուլիս)

Հ. Բ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Սյունիքը, Արցախը և Նախիջևանը 1918—1921 թթ. շատ ծանր օրեր էին ապրում։ Բաքուն և Անկարան ձգտում էին Հայաստանը վերացնել։ Ժամանակակիցներից Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Զիլինկարյան) գրել է. «Եթէ այսօր Զանգեզուրը Հայաստանի եւ ոչ թէ Ատրպէյճանի մաս կը կազմէ, ատիկա շատ կարեւոր չափով մը մենք պարտական ենք Նժդեհի զինուորական տաղանդին, ինչպէս եւ անոր քաղաքական սուր իրատեսութեան»[1]։

Նախիջևանի կողմից Թուրքերը, իսկ Արցախի կողմից ադրբեջանցիները մեծաթիվ հրոսակախմբերով 1919 թ. ամառվանից սկսած անընդհատ հարձակումներ էին գործում Զանգեզուրի վրա։ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Սյունիք է ուղարկվում Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան), որը 1919 թ. օգոստոսի սկզբին իր մի քանի հավատարիմ մարտիկներով ժամանում է Գողթան և նշանակվում Կապարդողթի[2] հրամանատար։ Նժդեհը նստավայր է ընտրում Կապանի հանքերը։ Նրա ամենաառաջին խնդիրն էր լուրջ հիմքերի վրա դնել ժողովրդի ինքնապաշտպանության գործը և կազմակերպել Սյունիքի ուժերը։ Նժդեհի խորհրդով ու պահանջով գյուղացիներն իրենք էին զենք պատրաստում, հաճախ էլ թշնամու դեմ կռվում նրանից խլված զենքով և ռազմամթերքով։ Նժդեհին հաջողվում է մի քանի ամսվա ընթացքում Սյունիքի ժողովրդի մեջ վերականգնել դիմադրական ոգին։ Դրա շնորհիվ թշնամու հսկայական գերակշռության պայմաններում երկու տարում Գարեգին Նժդեհի զորամասերն ունեցան ընդամենը 28 սպանված և ոչ մի գերի[3]։

Գարեգին Նժդեհի Սյունիք ժամանելուց հետո առաջին խոշոր կռիվները տեղի ունեցան 1919 թ. նոյեմբերին։ Թուրքական երկու վաշտ Էդիլ բեյի գլխավորությամբ Օրդուբադի կողմից ներխուժելով Օխչիձոր, այն հայտարարում է ադրբեջանական տարածք և Գողթանը կտրում Զանգեզուրից։ Նոյեմբերի 18-ին Նժդեհի զորախմբերն անցնում են հակահարձակման, ջախջախում թշնամուն և Գողթանի ու Զանգեզուրի միջև ճանապարհը բացում։ Մինչ այդ 1919 թ. հոկտեմբերին, Արցախի կողմից Զանգեզուր էր ներխուժել մուսավաթական Ադրբեջանի բանակը և հետ շպրտվել։

Այնուամենայնիվ, Գարեգին Նժդեհի համար ամենադժվարինն ու ամենահամարձակը առջևում էր՝ Գեղվաձորի արշավանքը։ Նժդեհի այն արտահայտությունը, թե «Գեղվաձորը Զանգեզուրի համար այն է, ինչ որ Կարթագենը Հռոմի համար», միանգամայն ճիշտ էր։ Գեղվաձորի ադրբեջանցիները սերտ կապ ունեին Նախիջևանի, Զանգեզուրի, Ջեբրայիլի, նաև Հաջիսամլուի իրենց ազգակիցների հետ[4]։ Գեղվաձորի ազատագրումը և այդտեղից սպասվող վտանգի վերացումը ամենահրատապ խնդիրն էր։ Լուրջ նախապատրաստական աշ-

---

[1] *Ա վ ո, Նժդեհ։ Կյանքն ու գործունեությունը։ Նշխարներ, վկայություններ։ Պեյրութ, 1968, էջ 430։*

[2] *1919 թ. օգոստոսի 10-ին Նժդեհն իր առաջին պատգամ-հրամանով Զանգեզուրը բաժանում է հետևյալ շրջանների՝ Կապան, Գողթան, Արևիք (Մեղրի, Գնդեվազ)։ Կապարդողթը կազմված է այդ անունների առաջին վանկերից։*

[3] *Հայրենիք (Բոստոն), 1923, № 11, էջ 78։*

[4] *Ա վ ո, նշվ. աշխ., էջ 88։*

խոտանքներից հետո Նժդեհի զորամասերը 1919 թ. դեկտեմբերի 1-ին անցան հարձակման և արդեն դեկտեմբերի 4-ին Բաղաբերդի բարձունքի վրա ծածանվում էր հայկական եռագույնը, իսկ դեկտեմբերի 7-ին Գեղվաձորի բոլոր գյուղերում տոնում էին այդ փայլուն հաղթանակը[5]։

Շուտով մարտերը փոխադրվեցին Բարգուշատի և Հաքարլուի շրջանը, որտեղի մահմեդականները Շուռնուխի կողմից անընդհատ հարձակումներ էին գործում Կապանի հայկական գյուղերի վրա։ Նրանք նման մի հարձակում ձեռնարկեցին հունվարի 19-ին և սկսեցին բարբարոսաբար ավերել գյուղերը։ Բացի այդ, Ադրբեջանը մեծ ուժեր էր կենտրոնացնում Ղարաբաղ և Զանգեզուր ներխուժելու համար։ Հետևապես, անհրաժեշտ էր շտապել։ Նժդեհի ուժերը 1920 թ. հունվարի 19-ին անցան հարձակման և մեկ օր անց փայլուն հաղթանակ տարան։ Ադրբեջանի պառլամենտի անդամ Ջելիլ բեգ Սուլթանովը շտապ հեռագրեց Բաքու. «Գավառի դժբախտ ազգաբնակչության անունից աղերսում եմ թղթի վրայի բողոքներից անցնել ակտիվ գործողության և կործանումից փրկել Ադրբեջանի լավագույն անկյունը։ Զանգեզուրից հետո հերթը Ղարաբաղինն է»[6]։

Գարեգին Նժդեհին ամենից շատ անհանգստացնում էր Գողթանի հայության ճակատագիրը։ Անհրաժեշտ էր պաշտպանել Զանգեզուրի նախադուռ հանդիսացող Գողթանը և գողթանցիներին փրկել ցեղասպանությունից։ Գարեգին Նժդեհը 1920 թ. մարտի 20-ին սկսեց իր արշավանքը դեպի Օրդուբադ։ Մինչ այդ Օխչիձորի, Գեղվաձորի և Շուռնուխի ճակատամարտերում փայլուն հաղթանակներ տարած Նժդեհի ջոկատներին հաջողվեց շեշտակի հարվածով ազատագրել Գողթանը և անցնել Որոտանի կիրճը։ Այսպիսով, Զանգեզուրի և Գողթանի վրա կախված թուրք-ադրբեջանական վտանգը վերացվեց։ Այդ առթիվ 1920 թ. ապրիլի 22-ին Գորիսում կազմակերպվեց տոնահանդես և զորահանդես, որի ժամանակ Կապանի հայությունը Նժդեհին նվիրեց դրոշակ, իսկ Գորիսի Ազգային խորհրդի նախագահ Սմբատ Մելիք-Յոլչյանը (Ոլչյան) իր Գեորգյան խաչը կախեց Նժդեհի կրծքին։

Գարեգին Նժդեհը շատ էր մտահոգված նաև արցախահայության ճակատագրով, քանի որ անգլիական գաղութարարները Զանգեզուրն ու Արցախը հայտարարել էին Ադրբեջանի տարածք։ Արցախահայությունը զայրույթով ընդունեց այդ հայտարարությունը և շարունակեց պայքարը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար։ 1920 թ. գարնանը Արցախում սկիզբ առած ապստամբությունը չնայած անժամանակ էր, բայց և այնպես հետզհետե լայն բնույթ ընդունեց։ Օգտվելով առիթից, մարտի 22—23-ին թուրք-ադրբեջանցիները ներխուժեցին Արցախ՝ ավերելով տասնյակ գյուղեր և հրի մատնելով Շուշի քաղաքի հայկական մասը։ Արցախցիներն օգնություն խնդրեցին Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար Ս. Ղազարովից և Գարեգին Նժդեհից[7]։ Ընդառաջելով արցախահայությանը, Զանգեզուրի ռազմական ուժերը Դրոյի հրամանատարությամբ ապրիլի կեսերին մտան Վարանդա, իսկ Գարեգին Նժդեհինը՝ Դիզակ։ Ամիս ու կես կռիվներ են տեղի ունենում Արցախի և Զանգեզուրի միջև ընկած Բարգուշատ-Հաքարլու տարածքում։ Նժդեհի զորամասերին հաջողվում է ջախջախել թշնամուն և մտնել Արցախի Դիզակի շրջան, չեզոքացնելով Դրոյի զորքերի աջ թևին տպառնացող վտանգը։

Արցախահայությունը սիրով ընդունեց մայր հայրենիքից օգնության եկած գինվորներին և ամեն ինչով օգնում էր նրանց։ Գարեգին Նժդեհը չէր կարող Արցախում երկար մնալ, ուստի մի քանի օրից վերադարձավ Կապան, իսկ Դրոն մնաց Արցախում։

---

5 Վարդան Գևորգյան, Լեռնահայաստանի գոյամարտը (1919—1921), Պուքրէշ, 1923, էջ 22։

6 Նույն տեղում, էջ 32։

7 Նույն տեղում, էջ 40—41։

1920 թ. ապրիլի վերջին Ադրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր։ Այստեղ մնած 11-րդ կարմիր բանակը դրվեց Ադրբեջանի խորհրդային իշխանության ենթակայության տակ։ Նախկին մուսավաթական ասկյարներն արագորեն վերահանդերձավորվելով մնան 11-րդ կարմիր բանակի շարքերը։ Ադրբեջանի կառավարության պահանջով 11-րդ կարմիր բանակի զորամիավորումները թուրք-ադրբեջանական «կարմիր դնդերի» հետ օկուպացրին Արցախը։

Դրանից հետո Ադրբեջանը ձգտում էր ռուսական կարմիր բանակի ուժերի օգնությամբ գրավել նաև Զանգեզուրը՝ Սիսիանը, Կապանը, Գնդեվազը և Նախիջևանի վրայով ճանապարհ բացել դեպի Թուրքիա։ Մինչև ռազմական գործողություններին անցնելը, բոլշևիկների գործակալներն այդ վայրերում «Եղբայրական ամենաստոր միջոցները գործադրելով՝ մոլորեցնում են պարզամիտ գյուղացիության, թե բոլշևիկ ռուսը բերում է յուր հետ խաղաղություն, կյանքի, բարիքների, քաղաքական ազատություն և աշխատավոր գյուղացիության իշխանություն...»[8]։

11-րդ կարմիր բանակի 28-րդ հրաձգային դիվիզիայի 84-րդ զորամասը, ինչպես և 83-րդ դիվիզիայի 247, 248 և 249 գնդերը 1920 թ. հուլիսի 5-ին ներխուժեցին Զանգեզուր։ 11-րդ կարմիր բանակի հրամանատարներից Վատլենկոն այսպես է արդարացնում Զանգեզուր ներխուժելու իրենց քայլը. «Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում տեղի ունի ազգամիջյան կոտորած հայերի և Թուրք-Թաթարների մեջ, որի հետևանքով ջնջվում են աղքատների անբախտ և անօգնական ընտանիքները։ Ոչնչացնում են ամբողջ գյուղեր և հազարավոր գյուղացիներ զրկվում են օթևանից։ Անհրաժեշտ է այդ ամենին վերջ տալ»[9]։

Կարմիր բանակի օկուպացիոն ուժերը Զանգեզուրը նվաճած համարելով, շարժվում են դեպի Դարալագյազ, գրավում Սիսիանը՝ մինչև Բազարչայի արևմտյան լեռնաշղթան, որտեղից էլ կապ են հաստատում Նախիջևանի և Թուրքիայի հետ։ Մի զորամաս հուլիսի 8-ին շարժվում է դեպի Կապան, ուր այդ ժամանակ գտնվում էր Գարեգին Նժդեհը։ Զորամասը, Կապանի Վերին Խոտանան գյուղի մոտ հանդիպելով գյուղացիների ուժեղ դիմադրությանը, ստիպված էր կանգ առնել։ Նրա զինվորական կոմիսար Իվանովը հուլիսի 10-ին Նժդեհին է ուղարկում հետևյալ գրությունը. «Արդեն Ղարաբաղ-Զանգեզուր է մտել կարմիր բանակը, բոլոր տեղերում կազմակերպված են ռևկոմներ։ Հրամայում եմ այդ առթիվ ժողովրդին հայտարարել և ճամփա տալ Վերին Խոտանանում գտնվող մեր զորամասերին Մեղրիի վրայով անցնելու Օրդուբադ-Ջուլֆա»[10]։ Երկու օր անց կարմիր հրամանատարը ստանում է հետևյալ պատասխանը. «Կապարգողթի գյուղացիական ներկայացուցչական խորհուրդը հրամայել է վաղը՝ հուլիսի 13-ին, մինչև ժամը 7-ը թողնել Կապանի սահմանները, հակառակ դեպքում ստիպված կլինեմ անցնելու հարձակման և զենքի ուժով վանելու Ձեզ։

Կապարգողթի ռազմական ուժերի հրամանատար՝ Նժդեհ»[11]։

Օկուպանտները ստիպված էին թողնել դիրքերը և վերադառնալ Գորիս։

Այդ օրերին Դրոն, որը մայիսի 25-ին նահանջել էր Արցախից, որոշեց Զանգեզուրը հետ գրավել։ Նա Դարալագյազից շարժվելով՝ օգոստոսի 3-ին ազատագրում է Գորիսը ու հակառակորդին հետ շպրտում Զաքուխ։ Սակայն կարմիր զորամասերը նոր ուժերով համալրվելով, անցնում են հակահարձակման և օգոստոսի 7-ին նորից գրավում Գորիսն ու Սիսիանը։

Ադրբեջանի կառավարության պահանջով 11-րդ կարմիր բանակի զորամասերը հուլիսի 29-ին Կապանի շրջանում վերսկսեցին հարձակումները։ Այս անգամ մարտերը շարունակվում են 72 օր։

---

8 Արնոտ գիրք, Գորիս, 1921, էջ 3։

9 Մշակ, 7. VIII. 1920։

10 Արնոտ գիրք, էջ 6։

11 Նույն տեղում։

1920 թ. օգոստոսի վերջին 11-րդ կարմիր բանակի 248, 249, 251 և 252 գնդերից կազմված զորամիավորումը շարժվեց դեպի Կապան-Գենդեվազ՝ Գարեգին Նժդեհի ուժերն արյան մեջ խեղդելու համար։ Միևնույն ժամանակ Նախիջևանից՝ Օրդուբադի կողմից թուրք-ադրբեջանական ուժերը ներխուժեցին Կարճևան գյուղ։ Հակառակորդը հարձակման անցավ նաև Շվանիձոր և Կալեր գյուղերի ուղղություններով։ Հետագայում՝ սեպտեմբերի 20-ին, Գարեգին Նժդեհը հանրապետության զինվորական նախարարին հաղորդում է. «Թշնամին ինձ վերա հարձակվեց միաժամանակ և Ջեյվայից, Ինջաբելից, Գեղվաձորից և Գյադբելից։

Մեծամասնականները ոտքի էին հանել Բարգուշատի, Հաքարլուի, Այրիշայի և Գեղվաձորի բովանդակ ուժերը, օգնական ուժեր էին բերել և Ջեբրայելից։ Առաջնորդի դեր էր կատարում Զանգեզուրի ժողովրդի տականքը՝ հայ դավաճանների մի ամբողջ լեգեոն»[12]։

Սյունիքը բոլոր կողմերից շրջափակվում և կտրվում է դրսի աշխարհից։ Անընդհատ շարունակվող կռիվները և Երևանից որևէ օգնություն ստանալու հույսի բացակայությունը հուսալքում է առաջ բերում ժողովրդական զինված ուժերի մեջ։ Կապանի գյուղացիները ստիպված էին ցած դնել զենքը և օկուպանտներին ներս թողնել։ Որոշ ուժեր Գարեգին Նժդեհի գլխավորությամբ քաշվեցին Խուստուփ լեռ՝ հավատալով իրենց արդար պայքարի հաջողությանը և վերջնական հաղթանակին։

Գարեգին Նժդեհի գլխավորած ազատագրական պայքարի դրոշի տակ համախմբվածների պայքարը նախ և առաջ ուղղված էր մի խումբ ազգադավ բոլշևիկների, ռուսական «ազատարար» կարմիր բանակի օկուպացիոն քաղաքականության և «կարմիր մահմեդականների» բարբարոսությունների դեմ։ 1920 թ. հուլիսից մինչև նոյեմբեր, հինգ ամիս շարունակ, Սյունիքի հայությունը հերոսական պայքար մղեց այդ ուժերի դեմ, որոնց կողմից այստեղի «հայ աղգաբնակությունը բառացի կերպով կողոպտված» էր և «ամբողջ կայքն ու գույքը հափշտակված»[13]։ Այդ ժամանակաշրջանում է՛լ ավելի դրսևորվեց Կապարգողթի ժողովրդական ուժերի հրամանատար Գարեգին Նժդեհի կազմակերպչական ու ռազմական տաղանդը։ Հենց դա ի նկատի ունենալով, 1920 թ. օգոստոսի 25-ին ողջ ժողովուրդն ու զինվորները Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում հանդեսով Նժդեհի մեջքին կապում են կարմիր գոտի և նրան հռչակում Լեռնային Հայաստանի Սպարապետ։ Ժողովուրդը ցնծության մեջ էր։

1920 թ. օգոստոսի 10-ին, այսինքն՝ Սևրի պայմանագրի ստորագրման օրը, Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանն իբրև վիճելի տարածքներ օկուպացվում էին ռուսական կարմիր բանակի կողմից։ Այդ համաձայնագրից դժգոհ էր ոչ միայն Գարեգին Նժդեհը, այլև խորհրդային Ռուսաստանը։ Պայմանագիրը ստորագրվելուց երկու օր անց 11-րդ կարմիր բանակի հրամանատարության հետ հեռախոսով ունեցած իր զրույցի ժամանակ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գ. Չիչերինը հասկացնում է, որ Շախտախտին Հայաստանի կազմում թողնելը, Ռուսաստանին և Ադրբեջանին կտրում է Թուրքիայի և Պարսկաստանի հետ կապ ունենալուց, մի բան, որից կարելի էր խուսափել[14]։

Օգոստոսի 18-ին հանրապետության զինվորական նախարարին ուղարկած նամակում Նժդեհը տարակուսանք է հայտնում վերոհիշյալ համաձայ-

---

12 Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 22։

13 Մշակ, 22. X. 1920։

14 Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի արխիվ (այսուհետև՝ ՀԿԿ ՀՔՀԻԱ), ֆ. 1022, ց. 8, գ. 117, թ. 1։

նագրի վերաբերյալ։ Նա համոզված էր, որ բոլշևիկները «անձնաւորելով Ադրբեջանի քողարկված վտանգը, յամառօրէն ձգտում են զինաթափելու, տնտեսապես քայքայելու, գրկատելու և ապա տեղահանելու կամ բնաջնջելու Զանգեզուրի հայութեանը»[15]։ Օգոստոսի 20-ին Հանրապետության զինվորական նախարարին ուղարկած նոր նամակում Դարեգին Նժդեհը զգուշացնում է, որ Կապարգողթի զիջումը Ադրբեջանին «նշանակում է մեծապես դժվարացնել մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը»։ Ապա՝ «ձեռքից տալով Ղափանի, Գնդեվազի, Գեղվաձորի և Գողթանի բնական ամրությունները, Արարատյան հարթավայրերում մենք հեշտությամբ չպետք է կարողանանք կազմակերպել ու վարել մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան դժվարին գործը»[16]։ Այդ նույն օրը Կապանի հանքերից Կապարգողթի ռազմական ուժերի հրամանատարը Երևան ուղարկած հատուկ զեկուցագրում հաղորդում է. «Ադրբեջանը գործում է։ Նրա հարյուրավոր ագենտները՝ իբենց տաբած պյուռոսյան հաղթութեամբ արբեցած՝ օրնիբուն չափչփում են Զանգեզուրի և Սիսիանի գյուղերը և համոզում, հավատացնում ժողովրդին, որ «Սովետական Ռուսաստանը ստիպել է Հայաստանի կառավարության ձեռք քաշել Զանգեզուրից, որ այդ երկիրը, արդեն տրված է Ադրբեջանին և այլն...»[17]։ Զեկան և այլ հիմնարկություններ կողոպտում էին ժողովրդին, զբաղվում սպանություններով։ Կարմիր բանակի հետ գործում էր Զանգեզուր բերված 1200 հոգիանոց թուրքական 8-րդ գունդը, որոնց ասկյարները զբաղվում էին կողոպուտով, բռնաբարությունների, ամեն տեսակի ավազակություններով[18]։

Կարմիր բանակի ոճրագործությունների մասին են վկայում հետևյալ փաստերը. 1920-ի օգոստոսի 2-ին Գորիսից նահանջելուց առաջ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամներ Վահան Խորենուն և Արշակ Շիրինյանին, ինչպես և սիսիանցիներ Զաքար Տեր-Ղազարյանին և Մ. Ադամյանին գազանաբար կացնահարում են Գորիսի բանտում։ Օգոստոսի 3-ին շրջթայված Շուշի են տանում 17 բանտարկյալների՝ Զ. Տեր-Դավթյանին, Գ. Մալինցյանին, Գ. Մարտիրոսյանին, Պ. Փարսյանին, Դ. և Գ. Տեր-Մկրտչյան եղբայրներին, Ս. Դադայանին և ուրիշների։ Ճանապարհին, առանց որևէ հարցաքննության նրանց գնդակահարում են Ղարաղշլաղի դիմաց՝ Նակեր կոչված տեղում։ Հոկտեմբերի 16-ի գիշերը Գորիսի բանտում սպանվում են ցարական ինքնակալության օրոք 10 տարով բանտ նստած Սաքոն (Համբարձում Սարգսյան) և նրա ընկերներ Ավանես Մալինցյանը, Ալեքսանդր Միրաքյանը, Ալեքսանդր Տեր-Մկրտչյանը, Փ. Մելիք-Փարսադանյանը, Բ. Սարդսյանը, Սահակ-Բեկովը, Սիմոն Պողոսյանը, Հակոբ Վանեսովը, Շամիլ Կարապետյանը, Ահարոն Կարապետյանը (Ղահրամանյան), Հ. Շալունցը և այլք[19]։ Առանց որևէ քննության Բաքու են տարվում Հովհաննես վարդապետ Տեր-Գրիգորյանը, առաջնորդի Սմբատ Մելիք-Ստեփանյանը և ուրիշներ[20]։ Միայն Գորիսի բանտում մշտապես պահվում էր 100 բանտարկյալ՝ պատանդի անվան տակ։ 1920 թ. հուլիսի 6-ից մինչև նոյեմբերի 19-ը Գորիսի կենտրոնական բանտում քաղաքական հողի վրա պահվել են 763 հոգի, որոնցից 379-ը՝

---

15 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 9։

16 Նույն տեղում, թ. 20—21։

17 Նույն տեղում, թ. 16։

18 Վարազ Առաքելյան, Նժդեհ, Երևան, 1989, էջ 26։

19 Կարմիր բանակի 28-րդ դիվիզիայի պետ Նեստերովսկու 1920 թ. հոկտեմբերի 17-ի հրամանում գրված է. «Զանգեզուրի գավառի Կոմնիձոր գյուղի բնակիչներ Ավագիմ Պողոսյանը, Սիմոն Պողոսյանը, Շամիր Կարապետյանը, Ալեքսանդր Հասրաթովը, Հակոբ Վանեսովը և Ահարոն Ղահրամանովը գնդակահարված են՝ հակահեղափոխության և կոմունիստների ծնողներին ծաղրելու համար» (Արևոտ գիրք, էջ 65)։

20 Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊ ՊԿԱ), ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 11։

Գորիսի քաղաքային «կարմիր» պարետի կարգադրությամբ[21]։ Այստեղ տանջում և գնդակահարում էին նաև այն կարմիր զինվորներին, որոնք հրաժարվում էին զենք օգտագործել խաղաղ բնակչության դեմ[22]։

1920 թ. հուլիսի 10-ին ձերբակալում են Գորիսում գտնվող բոլոր տպաներին՝ իբր Ռուսաստան զինվորական դպրոց ուղարկելու համար, մինչդեռ իրականում տանում են Բաքու և Ռուսաստանի ներքին նահանգները, որտեղ նրանք դատապարտվում են տաժանակիր աշխատանքի։ Նույն օրը՝ հուլիսի 10-ի գիշերը երեք սպայի տանում են Քարահունջի ձորը, որտեղ երկուսին մերկացնում են և գնդակահարում, իսկ երրորդին հաջողվում է փախչել[23]։ Արխիվային մի փաստաթղթում ասված է, որ օկուպանտները Գորիսից տարել են մոտ 2000 գորգ, 1000 կարպետ, մոտ 100 կարի մեքենա, պահարաններ, սթոռներ, կահկարասի, 500 անկողին, նստարաններ, սեղաններ, տնային այլ իրեր, արդյունաբերական ապրանքներ, գյուղատնտեսական մթերքներ, քաղաքի բնակիչների ոտքերից հանել են 200 զույգ կոշիկ, գյուղերի և Գորիսի եկեղեցիները դարձրել են ախոռներ, Զանգեզուրից և շրջակա գյուղերից թալանել և տարել են 20 հազար փութ ցորեն և այլուր, քաղաքում և գյուղերում կանանց գլխից պոկել են զարդարանքներ, հանել մատանիները, ժամացույցները և այլն[24]։ 1920 թ. դեկտեմբերին 700 հայ կանանց ստորագրությամբ մի բողոք է ուղարկվում Գարեգին Նժդեհին, որում դատապարտվում են օկուպանտների բռնությունները։ Նման բողոքներով Նժդեհին են դիմում նաև Տեղ, Կոռնիձոր, Խոր և այլ գյուղերի բնակիչները[25]։

Սիսիան և Կապան էին ներխուժել մոտ 12000 զինվորականներ և այլ ձրիակերներ, որոնց հարկ էր կերակրել։ Գորիսի գավառային հեղկոմի որոշմամբ յուրաքանչյուր գյուղ գնդակահարության սպառնալիքի տակ պարտավոր էր մթերքներ ուղարկել Գորիս։ Զանգեզուրի գավառային հեղկոմը 1920 թ. սեպտեմբերի 10-ին Սիսիանի միլիցիային հայտնում է. «Հրամայում եմ 24 ժամվա ընթացքում Սիսիանից հավաքել և փոխադրել Գորիս 18.000 փ. ցորեն, նույն չափ գարի, 800 ոչխար և 70 հատ դրաստ։ Ընդդիմացողներին գնդակահարել և հաղորդագրել»[26]։ Այդ օրերին 11-րդ կարմիր բանակի զինվորական հեղափոխական խորհրդի լիազոր և Ղարաբաղի ու Զանգեզուրի արտակարգ կոմիսարի տեղակալ Արմենակ Ղարագյոզյանը (Կարակուզով), որն Արցախի և Սյունիքի ողբերգությունների գլխավոր հեղինակներից էր, ստիպված էր Գորիսի կայազորի պետ Ֆեոդորովսկուն հետևյալ գրությունն ուղարկել. «Հաճախ կարմիր զորամասերը և այլ անձինք կողոպուտով են զբաղվում, որի պատճառով գյուղացիությունը ջղայնանում և խորհրդային իշխանությանը հակառակ է տրամադրվում»[27]։ Ապա նա խնդրում է խորհրդակցություն հրավիրել և այդ հարցը քննել։ Արմենակ Ղարագյոզյանը մի այլ փաստաթղթում ցինիկորեն հայտարարում էր, թե կարմիր բանակը Զանգեզուրի վրայով մշտական ճանապարհ է ունենալու դեպի «Կարմիր Տաճկաստան» և ապա Սյունիքի հայությանը սպառնալով, նշում. «Վաղ թե ուշ թշնամու ուժերը պիտի ջարդվեն և այն ժամանակ մեր ցասումն ու բարկությունը պիտի թափվի այն գյուղերի վրա, որոնք պաշտպան են հանդիսացել նրանց։ Ժամանակն է, որ հայ աշխատավոր գյուղացիությունը խելքի գա, խղճա իր կնոջն ու երեխաներին և թող նա իր զենքը բարձրացնի ոչ թե կարմիր բանակի դեմ, որ եկել է հեռավոր Ռուսաստանից ազատագրելու բոլոր աշխատավորներին...

---

21 Արնոտ գիրք, էջ 24։

22 Հայրենիք, 1924, № 6, էջ 118։

23 Արնոտ գիրք, էջ 24։

24 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 11—11ա։

25 Նույն տեղում, թ. 21, 25։

26 Արնոտ գիրք, էջ 15։

27 Նույն տեղում, էջ 14։

այլ ավանտյուրիստ դաշնակների խմբերի դեմ, որոնք իրենց կաշին փրկելու համար կամենում են հայ աշխատավոր ժողովրդին կործանել...»[28]։

11-րդ կարմիր բանակի 28-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Նեստերովսկու 1920 թ. հոկտեմբերի 14-ի № 29 հրամանով կարգադրվում էր Ղափանի շրջանն արևելյան կողմից օղակել և «ճնշելով՝ դաժանությամբ վարվել ապստամբների հետ, ոչ մի բանդիտի կենդանի բաց չթողնելով»։ Թիկունքն ապահովելու համար պահանջվում էր «Տեղ գյուղում կուլակներից վերցնել 100 պատանդ և կարմիր զորքի թիկունքից մինչև իսկ մի գնդակ արձակելու դեպքում՝ բոլորին գնդակահարել»։ Հրամանի վերջում 83 և 84-րդ բրիգադների հրամանատարներից պահանջվում էր «խուսափել ամեն տեսակի մարդասիրական միջոցներից և դաժան լինել ապստամբ բնակչության հետ, որպեսզի նա զգա բանվորական բռունցքի թափը։ Դիմադրողներին գերի չվերցնել և կենդանի բաց չթողնել ոչ մի բանդիտի»[29]։

Կարևոր է նաև հետևյալ փաստը. ի լրացում վերոհիշյալ № 29 հրամանի, հոկտեմբերի 14-ին Նեստերովսկին հրամայում է «Զանգեզուրի գավառում ապստամբության պրոպագանդիստ դաշնակներին և սադրիչներին որսալու նպատակով ուժեղացնել լրտեսական գործունեությունը՝ չխնայելով ոչ ոքի, դնչացնել առանց դատի և քննության»[30]։

Երկու օր անց Նեստերովսկու նոր հրամանում կարդում ենք. «Թող իմանա Զանգեզուրի ամբողջ ազգաբնակչությունը, որ կարմիր բանակն ինչքան որ բարյացակամ է դեպի աշխատավորությունը, ինչքան որ իր կյանքն է զոհում աշխատավորության բախտավորության համար, այնքան էլ նա խիստ է ու անխնա իր թշնամիների նկատմամբ։ Բանդաների և ապստամբների ձեռքով տպանված ամեն մի մարդու փոխարեն կոչնչացվեն հարյուրավոր ապստամբներ»։ Ապա պահանջվում էր վերադառնալ խաղաղ աշխատանքի և հանձնել զենքերը, հակառակ դեպքում նրանք կարժանանային «կարմիր բանակի հեղափոխական դատավճռին», իսկ «եթե որևէ գյուղի բնակչություն բռնանա կամ սպանի մի կարմիր զինվորի, այդ գյուղը հողին կհավասարեցվի և կվերացվի երկրի երեսից»։ Նեստերովսկու հրամաններից երևելով, 252-րդ գնդի զինվորական կոմիսար Իվանովը հրամայում է Արևածաղիկը գրավելուց հետո մանուկներից մինչև 80—90 տարեկան ծերունիներին չխնայել և բոլորին գնդակահարել։

Արցախում ու Սյունիքում կարմիր բանակի և բոլշևիկների այդ անմարդկային արարքներից երևելով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը բողոք է ներկայացնում Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, իսկ Արցախ-Սյունիքի էքսպեդիցիոն զորամասի հրամանատար Դրոն՝ 11-րդ կարմիր բանակի 28-րդ և 32-րդ դիվիզիաների հրամանատարությանը[31]։ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գ. Չիչերինը 11-րդ կարմիր բանակի հրամանատարության հետ ունեցած վերոհիշյալ հեռախոսազրույցի ժամանակ պահանջում է բացատրություն տալ այդ ամենի համար[32]։ Նոյեմբերի 2-ին Գ. Չիչերինին ուղարկած հեռագրում Կովկասում գործող կարմիր բանակի հրամանատարությունը փորձում է անամոթաբար ժխտել կարմիր բանակի և մինչև անգամ մուսուլմանական գնդի կողմից Արցախի և Սյունիքի հայության նկատմամբ իրագործված բարբարոսությունները[33]։ Այդպիսի արարքները նույնիսկ տխրահռչակ Արմենակ Ղարագյոզյանին առիթ են տալիս Ադրհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին գրել, թե

---

28 Նույն տեղում, էջ 13։

29 ՀԿԿ ՀՔՀԻԱ, ֆ. 1022, ց. 1, թ. 142, թ. 1—2։

30 Նույն տեղում, գ. 138, թ. 1—2։

31 Նույն տեղում, գ. 106, թ. 24։

32 Նույն տեղում, գ. 117, թ. 2։

33 Նույն տեղում, գ. 133, թ. 1։

«նման դեպքերը նսեմացնում և վարկաբեկում են խորհրդային կառավարությանը»[34]։

Այդ օրերին կարմիր բանակի զորամասերը հարձակման անցան Օրդուբադի և Բարթազի կողմից։ Կարմիրները ուռքի հանեցին նաև Զանգեզուրի և Օրգոսբադի ադրբեջանցիներին։ Աշոտ Մելիք-Մուսյանը շտապ մեկնեց Երևան՝ որոշակի առաքելությամբ։ Սյունիքի ապստամբներին ամենից առաջ հայկավոր էր զենք, հագուստ և դրամ։ Հայտնի է, որ խորհրդային Ռուսաստանից ստացած օգնությամբ Թուրքիան զինվեց և սեպտեմբերի 23-ին պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ։ Ինչպես հանրապետությունը գտնվում էր ծանր դրության մեջ, այնուամենայնիվ, Սյունիքի ապստամբները Երևանից որոշ օգնություն ստացան։

Նախիջևանից մինչև Արցախ տեղի էին ունենում անհավասար մարտեր։ Գարեգին Նժդեհը հանրապետության զինվորական նախարարին և սպարապետ Նազարբեկյանին դրում էր. «Թշնամու ուժերը հասնում են մի քանի հազարի։ Հարձակողների 70 տոկոսը թուրք է։ Օրդուբադի ճակատից յարձակողների մեջ կան նաև օսմանցիներ»[35]։

Գարեգին Նժդեհը Կապանի հանքերից հոկտեմբերի 20-ին հաղորդում է Երևան, որ «Կապարդողը օգակող թշնամին՝ «սովետականացնելու» տեղ միայն կոտորում է և թալանում»[36]։

Հայ մարտիկները կռվում էին հերոսաբար։ Կարճ ժամկետում նրանք ազատագրեցին Անգեղակոթը, Ղարաքիլիսան, ամբողջ Կապանի շրջանը և Ողջի ու Մեղրի գետերի ավազանները։ Հենց այդ օրերին Զանգեզուր են հասնում Բաքվից օգնության ուղարկված մուսուլմանական նոր ուժեր՝ Զավալ փաշայի հրամանատարությամբ, իսկ Հյուսիսային Կովկասից օգնության է գալիս կարմիր հեծելազորի հրամանատար Պ. Կուրոչկինը՝ իր պատժիչ ջոկատով (որոշ աղբյուրներում՝ Պ. Կյուրիշկո)։ Այդ առթիվ Արմենակ Ղարագյոզյանը հայտարարում է. «Զգույշ, սրան Կուրոչկին կասեն, որը կատակ չի սիրում... Կտեսնեք... Վաղը Նժդեհի և Ղափանի փոշին քամուն կտա»[37]։ Սակայն Պ. Կուրոչկինը շուտով պարտություն կրեց։ Նժդեհը կրկին ամրանալով Կապանում, 11-րդ բանակի հրամանատարությանը ուղարկում է մի վերջնագիր, որով պահանջում է Սյունիքն ազատել[38]։ Ապա Տաթևի և Գորիսի միջև գտնվող Ծռաբլուր կոչված դաշտում տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ Գարեգին Նժդեհի ջոկատները լիովին ջախջախում են Զավալ փաշայի «կարմիր» գունդը։ 1920 թ. նոյեմբերի 22-ի առավոտյան Գորիսի բազմահազար ժողովուրդը աղ ու հացով է դիմավորում քաղաք մտած Գարեգին Նժդեհի ջոկատներին։ 28-րդ դիվիզիայի կոմիսարի կողմից նոյեմբերի 23-ին ուղարկված նամակում փորձ է արվում Նժդեհին համոզել, թե իբրև Զանգեզուրում կռվող ռուսական բանակը երբեք էլ նվաճողական նպատակ չի ունեցել և իրեն չի համարել Հայաստանի հետ պատերազմական դրության մեջ։ Կոմիսարն առաջարկում է 48 ժամվա ընթացքում Գորիսում մնացած, հիվանդ, վիրավոր ու գերված զինվորներին և բանակին պատկանող գույքը վերադարձնել։ «Հակառակ դեպքում,—ասում է նա,—ռուսական խորհրդային կառավարությունը կհրաժարվի Հայաստանի և տաճկական հեղափոխական զորքերի միջև կնքվող հաշտության միջնորդությունից»[39]։ Դրան հաջորդում է 84-րդ բրիգադի հրամանատարի կողմից Զանգեզուրի գյուղացիությանն ուղղված մի սադրիչ հայտարարություն։ Դրանում չի թաքցվում, որ «Կարմիր բանակի հրամանատա-

---

34 Արնոտ գիրք, էջ 23։
35 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 15։
36 Նույն տեղում, թ. 4։
37 Վարդան Գևորգյան, նշվ. աշխ., էջ 87։
38 Այդ, նշվ. աշխ., էջ 132։
39 Արնոտ գիրք, էջ 70—71։

ությունն ու Ադրբեջանի խորհրդային իշխանությունը կարող են հրաման տալ կարմիր բանակի զորամասերին՝ մաքրել Զանգեզուրն ու Ղարաբաղը», իսկ անհրաժեշտության դեպքում կարմիր բանակն «ի վիճակի կլինի պաշտպանելու... խորհրդային Ադրբեջանը» և ապստամբների հետ «անողորմ վարվել»[40]։ Գարեգին Նժդեհն այս օրերին ստանում է Ավդալարի և Զաբուխի կիրճերում ջարդված կարմիր զորամասի հրամանատար Սեմյոնովի պաշտոնական գրությունը, որում նա խաղաղ բանակցության առաջարկ էր անում[41]։ Գարեգին Նժդեհը Սեմյոնովին նոյեմբերի 30-ին պատասխանում է մի ընդարձակ նամակով, որով մերկացնում է կարմիր բանակի հակահայկական, հակաժողովրդական գործունեությունը։ Նա կոնկրետ փաստերով ցույց է տալիս, թե հուլիսից մինչև նոյեմբերի վերջերը այդ «աղատարարները» Ադրբեջանի և բոլշևիկների պահանջով ինչպիսի անմարդկային արարքներ են կատարել Սյունիքում և Արցախում՝ թալանելով առանց այն էլ կարիքի մեջ գտնվող Ղարաբաղը և Զանգեզուրը։ Նժդեհը կարմիր բանակի պարտության պատճառները համարում է նրանց «չեկերի դեղերը... կաշառման սիստեմը... առանձին պոստերը, որոնց առաջ նսեմանում են ցարական բոլոր տեսակի ժանդարմական վարչություններն ու օխրանկաները... արճճի, սվինի լեզուն, որ ժողովուրդը չուզեց հասկանալ... շպիոնաժը... չերեզվըշայկաները... խորհրդալուր սպանությիններն ու հարիւրներով պատանդ վերցնելու խայտառակ սիստեմը... քաղաքական անհամբերությունն ու աղանդաւորությունը...»[42]։

1920 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին Հայաստանում իրադրությունը փոխվեց։ Բաքվում ստեղծված Հայ հեղկոմը կարմիր բանակի օգնությամբ Ղազախի կողմով հասցվեց Երևան։ Դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքվեց պայմանագիր։ Երևանից բավականին քանակությամբ մտավորականներ և այլ անձնավորություններ, որոնք հրաժարվեցին ենթարկվել բոլշևիկների բռնապետությանը, հեռացան Սյունիք՝ Գարեգին Նժդեհի մոտ։ Դեկտեմբերի 16-ին խորհրդային Հայաստանի ռազմավարական կոմիսար Ավիս Նուրիջանյանը և ռազմական ուժերի հրամանատար Դրոն մի կոչ ուղարկեցին Նժդեհին, որում ասվում էր, թե իբր Ադրբեջանը Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը զիջել է Հայաստանին և նրան առաջարկում էին վայր դնել զենքն ու «կանգնել խորհրդային Հայաստանի աշխատավորության դրոշակի տակ, մերձենալ Ռուսաստանին և խորհրդային Ադրբեջանին»։ Ապա նրանք պահանջում էին «անմիջապես դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողություն և ենթարկվել Հայաստանի խորհրդային իշխանությանը»[43]։

Երևանից հասնող լուրերը խիստ անհանգստացնում էին Գարեգին Նժդեհին։ Նա իմացավ, որ Տրոցկու պահանջով Բաքվի վրայով Մոսկվա է մեկնել Դրոն, որին Բաքվում հայ, ռուս և թուրք բոլշևիկները համոզում են, թե իբրև Հայաստանի փրկությունը կախված է միայն խորհրդային Ռուսաստանից և, որ ռուս-թուրքական կոնֆերանսը, որը նախատեսվում է փետրվարին տեսել Մոսկվայում, կարող է Քեմալի բանակը դուրս բերել Հայաստանից, եթե միայն Զանգեզուրը հայտարարի իրեն խորհրդային և իր բռնած դիրքով չխանգարի Մոսկվայի կոնֆերանսի աշխատանքներին։ Դրոն չէր կարող կանխագուշակել, թե Մոսկվա-Բաքու-Անկարա եռանկյունին ինչ է նախապատրաստում Հայաստանի համար։ Նման պայմաններում Սյունիքի հայությունը վճռեց իր ձայնը հնչեցնել։ 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում կայացավ համազանգեզուրյան առաջին համագումարը, որի ընդունած բանաձևում դատապարտվում են խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի և «կարմիր մահմեդականների»՝ հինգ ամսվա ընթացքում Սյունիքում կատա-

---

40 Նույն տեղում, էջ 72—73։

41 Նույն տեղում, էջ 75։

42 Նույն տեղում, էջ 78—84։

43 Նույն տեղում, էջ 86—88։

ված հակաժողովրդական արարքները։ «Խորհրդային հրամանատարությունը,—ասված է բանաձևում,—հենց առաջին քայլեն, գավառի գյուղացիության նկատմամբ սկսավ իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որուն մեջ նսեմացած են պատմական Լենկ-Թեմուրյան և արևելքի բարբարոսներու արշավանքներն ու գործելակերպը...

Այս բոլորեն հետք, մենք համոզվեցանք, որ սովածներու այդ բանակը եկած է միմիայն հափշտակելու մեր կայքն ու գույքը, թալանելու մեզ և խլպառ ոչնչացնելու...»[41]։

1921 թ. հունվարի 21-ին Բաքվից հինգ հոգուց բաղկացած մի պատվիրակություն է գալիս Զանգեզուր՝ բերելով Դրոյի և 11-րդ կարմիր բանակի հրամանատարության նամակը, որի ամբողջ բովանդակությունը հանդում է նրան, թե իբր «Զանգեզուրի չճանաչելը խորհրդային Հայաստանին խանգարելու է... լուծելու Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները» և որ Զանգեզուրի բռնած այդ դիրքը թուրքերի համար առիթ կծառայի «չհեռացնել իրենց զորքերը մեր երկրից»։ Դրոն հավատ էր տածում, թե «Զանգեզուրը և նրա ղեկավարները վերջ կտան իրենց բռնած քաղաքականությանը և կմիանան իրենց մայր երկրին՝ Հայաստանին, որ Մոսկվայի՝ տաճիկների հետ բանակցությունը կգա ապացուցելու, որ խորհրդային Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը»[40]։

Թե՛ Գարեգին Նժդեհը և թե ողջ Սյունիքի գյուղացիությունը շատ լավ գիտեին, թե ինչ է կատարվում խորհրդային Հայաստանում։ Այդ իսկ պատճառով 1921 թ. հունվարի 25-ին 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանն ուղարկած պատասխանում Նժդեհը գրում էր, որ 11-րդ կարմիր բանակի «բարձր հրամանատարության վարած քաղաքականության հետևանքով Հայաստանը դարձավ սոսկումների ու արյան թատերաբեմ»։ Բացահայտելով Հայաստանի նկատմամբ խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության էությունը, Նժդեհը շարունակում էր. «Հայաստանի այն մասերում, որոնք գրավված չեն տաճիկներով և գտնվում են խորհրդային իշխանության ներքո, ստեղծված է այնպիսի կացություն, որ ապառնում է հայ գյուղացիության ֆիզիկական գոյության և, որ ամենագլխավորն է, գլխատվում, սպանվում է ժողովրդի վենդանի խոսքը։ Հարյուրներով հայ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչները բանտարկվում են, գնդակահարվում և աքսորվում, ո՞ւր, հայտնի չէ»։ Այստեղ պարզ երևում է խորհրդային իշխանության ղեկավար շրջանների նենգամիտ միտումները՝ «գլխատել Հայաստանի աշխատավոր գյուղացիությանը և մեռցնել նորա անկեղծ հեղափոխական-սոցիալիստական միտքը»։ Գարեգին Նժդեհը պահանջում է հայ մտավորականությանն ազատել բանտերից, վերացնել նրա դեմ սկսված հալածանքները, մաքրել քեմալականների կողմից գրավված հայկական հողերը և հրաժարվել զանազան մութ անձնավորություններ Զանգեզուր ուղարկելուց[46]։

Բաքվից Գորիս եկած վերոհիշյալ պատվիրակության ղեկավար Գրիգոր Վարդանյանը պատմում է, որ Նժդեհն ամենից առաջ մեղադրում էր հայ բոլշևիկներին, որոնք ամեն ինչում ոգևորել և օժանդակել են կարմիրներին։

Հայաստանում իրար հաջորդող ցավալի իրադարձությունները հասցրին նրան, որ հայ ժողովուրդն ըմբոստացավ։ 1921 թ. փետրվարի 16-ին և 17-ին հանրապետության զանազան շրջաններում սկսվում են ժողովրդական ապըստամբություններ։ Գարեգին Նժդեհը, անշուշտ, տեղյակ էր Փետրվարյան ապստամբության նախապատրաստմանը։ Փետրվարի 16-ին, ապստամբությունը սկսվելուց երկու օր առաջ, նրա հրամանով, Յապոնի ջոկատները դրավում են Դարալագյազը և բացում Երևանի դռները։ Հակառակ դեպքում ապրիլի 2-ին ապստամբության ճնշումից հետո հազիվ թե հնարավոր լիներ փրկել

---

44 Ա վ ο, նշվ. աշխ., էջ 77։

45 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, ա. 70, թ. 29, Արնոտ գիրք, էջ 90—92։

46 Արնոտ գիրք, էջ 96—99։

հազարավոր հայրենասերների։ Հենց այդ օրերին՝ 1921-ի փետրվարի 21-ին, Գորիսի ս. Լուսավորիչ եկեղեցում տեղի ունեցավ Գարեգին Նժդեհին Սյունիքի սպարապետ հռչակելու հանդիսավոր արարողությունը։ Բազմության ներկայությամբ Նժդեհի մեջքին կապեցին օծված գոտին։ «Եվ անոր կը հանձնեն հայկական եռագույնը՝ «Ինքնավար Սյունիքի կառավարութենեն անհաղթ սպարապետ Նժդեհին» մակագրությամբ»[47]։

Գարեգին Նժդեհը ամեն կերպ ձգտում էր օգնության հասնել ապստամբներին։ Ս. Վրացյանը Նժդեհին և Դարալագյազի ուժերի հրամանատար Յապոնին մարտի 25-ին խնդրում է. «Ամեն գնով... կապվեք մեզ հետ և ճանապարհ ապահովեք»[48]։ Նժդեհը կարողացավ ապահովել ճանապարհը և մինչև հուլիսի կեսերը 8041 հոգի անցան Արաքսը՝ փրկվելով տեռորից։

1921 թ. ապրիլի 27-ին Տաթևի վանքում հրավիրվեց համազանգեզուրյան երկրորդ համագումարը, որը Սյունիքը հռչակեց Լեռնահայաստան։ Համագումարը միաձայն որոշեց. «Կառավարություն կազմելու համար վարչապետ ընտրել Սպարապետին, տալով անոր զորավարի աստիճան և պարգևատրել զայն «Խուստուփյան արծիվ»-ի երկաթե շքանշանով»[49]։

Գորիսը հայտարարվեց Լեռնահայաստանի մայրաքաղաք։

Այս անգամ բոլշևիկները և կարմիր բանակի հրամանատարությունը որոշեցին Զանգեզուրը գրավել խաղաղ ճանապարհով։ Այդ նպատակով Երևանից Զանգեզուր մեկնեց Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար Արտաշես Կարինյանը և 11-րդ կարմիր բանակի ներկայացուցիչ Մելնիկովը՝ բանակցելու Լեռնահայաստանի կառավարության հետ։ Երկու կողմերի պատվիրակները հանդիպեցին մայիսի 12-ին՝ Սիսիանի շրջանի Ղալագյուղ գյուղում։ Լեռնահայաստանի կառավարությունն առաջ քաշեց մի շարք էական պահանջներ, որոնք, սակայն, մնացին անպատասխան։

Կարմիր զորքերը տարբեր կողմերից հարձակման անցան։ Լեռնահայաստանի վիճակը խիստ ծանրացավ։ Այսպիսի պայմաններում, մանավանդ մեծ զոհերից խուսափելու համար, Լեռնահայաստանի կառավարությունը վրճռեց թողնել Սյունիքը և անցնել Պարսկաստան. Գարեգին Նժդեհը ամենավերջում, ծանր ապրումներով, հուլիսին թողեց հայրենի ոստանը և անցավ Արաքսը[50]։ Նա մոտ երկու տարի ոչինչ չխնայեց Արցախի և Սյունիքի հայությանը ցեղասպանությունից փրկելու և մայր հայրենիքին վերամիավորելու համար։ Այդ ժամանակաշրջանում կարմիր բանակը տվեց 15000 սպանված, 7000 գերի, նրանից խլվեց մոտ 200 գնդացիր, 7 թնդանոթ, մոտ 10 հազար հրացան, մեծ քանակությամբ ռազմամթերք[51]։

Շնորհիվ այդ դոյամարտի, Զանգեզուրը մնաց Հայաստանի Հանրապետության մեջ։

---

47 Ա վ ո, նշվ. աշխ., էջ 170։

48 Նույն տեղում, էջ 186։

49 Նույն տեղում, էջ 191։

50 Նժդեհի մասին հրապարակված մի շարք նյութերում գրված է, որ նա Զանգեզուրից հեռացել է հուլիսի 10-ին։ Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության կոմիտեի արխիվում պահվող Նժդեհի վերաբերյալ նյութերում ասված է, որ նա Զանգեզուրից հեռացել է հուլիսի 15-ին (ՊԱԿ-ի արխիվ, գ. 5231, հ. 3, թ. 68)։

51 Վ ա ր դ ա ն Գ ե ո ր գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 163։

ГАРЕГИН НЖДЕ В СЮНИКЕ
(август 1919—июль 1921 гг.)

Г. Б. Абрамян

Резюме

Весной 1919 г. Андраник со своими отрядами отошел из Зангезура. Положение армян в Сюнике и Арцахе все более ухудшалось. Правительство Республики Армения не могло оставаться безучастным к своим восточным районам, где свирепствовали турецко-татарские варвары. Решением правительства Республики Армения в Сюник со своими отрядами посылается Гарсгин Нжде (Гарегин Тер-Арутюнян).

Почти два года, до 15 июля 1921 г., Гарегин Нжде, умело используя свои организаторские качества и военный талант, возглавлял национально-освободительное движение армян, направленное против турецко-татарских захватчиков и оккупантов 11-й Красной армии.

Только в результате этой героической борьбы стало возможным предотвратить новый геноцид в Сюнике и Арцахе.